Հաստատում եմ՝
Հայաստանի Հանրապետության
պետական կառավարման
ակադեմիայի ռեկտոր

ԽՍԱՀԱՏՈՒՐ ՂԱՋԵՅԱՆ

____ _____ 2024 թ.

ԿԱՐԾԻՔ
(առաջատար կազմակերպության)
ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Լիլիթ Վիկտորի Դալլաքյանի «Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

<u>Հաստատվել է</u>

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի 2024 թ. սեպտեմբերի 6-ի նիստում: Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հ. Պետրոսյանը, ՀՀ ՊԿԱ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, քաղ. գիտ. թեկնածու Է. Ալեքսանյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մարգարյանը, հոգ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ռ. Վ. Աղուզումցյանը, հոգ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Հ. Պողոսյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ. Էլամիրյանը, քաղ. գիտ. թեկնածու Մ. Արսենյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու Գ. Ղուկասյանը, քաղ. գիտ. թեկնածու Մ. Մարգարյանը, հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի գործավար Ս. Յ. Ավագյանը: Մասնակցում էին նաև ասպիրանտներ Ն. Հովհաննիսյանը, Ա. Աբրահամյանը:

Նոր աշխարհակարգի կայացման պայմաններում էթնոքաղաքական հակամարտություններն ուղեկցվում են լոկալ պատերազմներով, տևական շրջափակմամբ, էթնիկ զտումներով, տեղահանությամբ ու արտագաղթով: Փաստորեն, էթնոքաղաքական հակամարտությունների հանգուցալուծման արդի հիմնախնդիրները հիմնականում «ուժային բևեռների» կողմից իրենց գերիշխանության համար վարած խաղային քաղաքականության հետևանք են: Բազմաչափ տուրբուլենտությունը, որպես նոր աշխարհակարգի կայացման

գործընթացի բնութագրիչ, ստեղծել է այնպիսի անորոշություններ, որոնք ուղեկցվում են քաղաքական զարգացման ճգնաժամերով, «ուժային բևեռների աշխարհաքաղաքական, քաղաքատնտեսական, քաղաքակրթական ագրեսիվ մրցակցությամբ: Այս համատեքստում Հարավային Կովկասում ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական մրցակցության էությունը և բնույթը բացահայտելու, ինչպես նաև ապագաբանական հեռանկարները «գիտավերլուծական» հարացույցի տիրույթում կառուցվածքավորելու նպատակով գերակա նշանակություն ունի հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների համակարգային ուսումնասիրումը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, երբ երկբևեռ աշխարհը դարձավ ոչ թե միաբևեռ, այլ բազմաբևեռ, վերջինիս դերակատարներն իրենց ազդեցության գոտիների ընդարձակման համար սկսեցին խրախուսել էթնոքաղաքական հակամարտությունները՝ հրահրելով միջէթնիկական պատերազմներ: Նմանօրինակ քաղաքականության վառ օրինակ է Հարավային Կովկասը, երբ նոր անկախացած պետությունների ստեղծումից հետո, ուժային բևեռի իրենց կարգավիճակի ամրապնդման նպատակով, և՛ ՌԴ-ն, և՛ ԱՄՆ-ը, և՛ տարածաշրջանային դերակատարության ձգտող ԵՄ անդամ պետությունները ցանցավորեցին իրենց մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի էթնիկական հակամարտությունների տուրբուլենտ գործընթացներում: Միանշանակ, լինելով գորբաչովյան վերակառուցման քաղաքականության արդյունք և ունենալով պատմական խոր արմատներ՝ Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները գերակա ազդեցություն ունեցան և ունեն Հարավային Կովկասի նոր անկախացած երեք պետությունների ժողովրդավարական անցման, քաղաքական զարգացման ճգնաժամերի, ժողովրդավարության որակի ինստիտուցիոնալ ապահովման, ինչպես նաև քաղաքական ընտրանու լեգալ և լեգիտիմ հավաքագրման վրա:

Այդ դիտանկյունից ատենախոսության հեղինակ Լ. Վ. Դալլաքյանը «Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում» թեման ուսումնասիրելիս իր առջև խնդիր է դրել և ջանացել է արդեն կուտակված նյութերի հիման վրա համեմատության մեջ վերլուծել Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի էթնոքաղաքական հակամարտությունների ծագման պատճառները, դրանց նմանություններն ու առանձնահատկությունները, զարգացման փուլերը, բանակցային գործընթացը, միջնորդական առաքելությունների անհաջողության պատճառները: Միաժամանակ, ատենախոսության հեղինակ Լ. Վ. Դալլաքյանը խիստ կարևորել է համաշխարհային ու տարածաշրջանային բարդ ու հակասական զարգացումների, հայտնի մարտահրավերների և աշխարհաքաղաքական գործընթացների միտումները՝ մասնավորապես փաստելով. «...Հարավային Կովկասի ժողովուրդները երկար ու բարդ բանակցային ճանապարհ պետք է անցնեն

հակամարտությունների արդարացի լուծման համար, հակառակ պարագայում հարավկովկասյան տարածաշրջանը կդառնա արյունալի բախումների ու անկայունության թատերաբեմ» (տե՛ս գրախոսվող աշխատանքի 4-րդ էջ): Նման մտահոգությամբ ատենախոսության հեղինակ Լ. Վ. Դալլաքյանը հիմնավորել է հետևյալ մոտեցումը. «Հենց այս ամենով ու երկարատև խաղաղություն հաստատելու հրամայականով է պայմանավորված ուսումնասիրության թեմայի արդիականությունը և գիտագործնական կարևորությունը՝ Հարավային Կովկասում ընթացող ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում բացահայտելու հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների լուծման բանալիները՝ հասկանալի պատճառներով շեշտը դնելով արցախյան հիմնախնդրի արդարացի հանգուցալուծման վրա»: Այս համատեքստում անհրաժեշտ է հումանիզացնել Հարավային Կովկասում «ուժային բևեռների» դիրքորոշումները:

Նոր աշխարհակարգի կայացման իրողություններն ու մարտահրավերները հետազոտական նոր հորիզոններ են բացել էթնոքաղաքականություն ուսումնասիրող գիտությունների առջև: Այս համատեքստում քաղաքական գիտության (Political Science) առջև ևս ծառացել են նոր մարտահրավերներ, այն է՝ նորովի ուսումնասիրել քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացները իրենց աշխարհաքաղաքական, քաղաքակրթական, գոյաբանական չափումներում: Այս իմաստով էթնոքաղաքականությունը և էթնոքաղաքական հակամարտությունները, որպես քաղաքական գիտության դիսցիպլին, նպատակահարմար է ուսումնասիրել քաղաքական, սոցիալական, տնտեսական գործոնների ու անվտանգային հիմնախնդիրների փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների համատեքստում: Այստեղից էլ՝ քաղաքական գործընթացների կառավարման նմանօրինակ ընկալումը, ինչպես նաև «ուժային բևեռների» կողմից նրանց վարած գլոկալ և լոկալ քաղաքականությունը պայմանավորում են քաղաքական գիտության զարգացման ներկա փուլը: Այն բնութագրվում է ինչպես ակադեմիական և կիրառական գիտելիքների համակարգվածությամբ, այնպես էլ իր «գիտավերլուծական» հարացույցի ցանցային ու աստիճանակարգային զուգամիտումներով:

Վերոշարադրյալը մեզ հնարավորություն է տալիս փաստելու, որ **Լ. Վ. Դալլաքյանի «Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ - ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում»** թեմայով ատենախոսության արդիականությունը պայմանավորված է էթնոքաղաքական հակամարտությունների հիմնախնդրի համակարգային ուսումնասիրության հիմնավորմամբ: Դա ռազմավարական առումով թույլ կտա ընդարձակված օրակարգով անվտանգության ապահովման նոր հրամայականներ մշակել ՀՀ-ի համար՝ ձևավորելով «ուժային բևեռների» հետ հարաբերությունների ռազմավարական ապագայի քաղաքականություն:

Գնահատելի է այն, որ հեղինակը, ի սկզբանե ելակետ ընդունելով թեմայի բազմաշերտությունը, օգտագործել է գիտական վերլուծության համակարգային ուսումնասիրության մեթոդը՝ կատարելով համեմատական վերլուծություն: Հենց այդ մեթոդն է թույլ տվել վեր հանել «ուժային բևեռների» և հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների հիմնախնդրի նկատմամբ մոտեցումների ու իրականացվող քաղաքականության տարբերությունը:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել ինչպես **հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների,** այնպես էլ այլ տարածաշրջանների պետությունների արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության ռազմավարությունների մշակման, իրականացման և վերարժևորման գործընթացում:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երկու գլուխներից (ութ ենթագլուխներից), եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները համապատասխանում են ատենախոսության հիմնական օրինակի բովանդակությանը:

Ատենախոսության հիմքում դրված գիտական կանխավարկածը ուշագրավ է այն առումով, որ հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների հիմնախնդիրը իմաստավորվել է ՀՀ անվտանգության ապահովման տիրույթում:

Այնուհանդերձ, կարծում ենք, որ ատենախոսությունը կշահի, եթե հեղինակը հաշվի առնի ստորև ներկայացված մեր դիտողությունները.

1. Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների ծագումնաբանությունը և դրանց համեմատական բնութագիրը»,** ունի հինգ ենթագլուխ՝ ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման և նոր պետությունների ստեղծման գործընթացների առանձնահատկություններն ու ընդհանրությունները, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման տեսլականը ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման համատեքստում, Հարավային Օսիայի հիմնախնդիրը, Աբխազիայի հիմնախնդիրը, Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների համեմատական բնութագիրը դրանց կարգավորման գործընթացների համատեքստում: Նշված հինգ ենթագլուխներից առաջինը տեսական բնույթ ունի: Այն նվիրված է ազգերի ինքնորոշման իրավունքին: Սակայն, ատենախոսության վերնագրից ակնհայտ է, որ աշխատանքի առանցքային հիմնախնդիրը **հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտություններն են:** Եթե հեղինակը էթնոքաղաքական հակամարտություններն ուսումնասիրեր **«ժողովրդավարական անցման» և «անցումից համախմբման»** քաղաքական զարգացման և արդիականացման տեսությունների տիրույթում, ապա դա նրան հնարավորություն կտար հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները վերլուծելիս

բացահայտել **«ինքնորոշում»** կատեգորիայի արժեքային բազմաչափությունը: Ավելին, հեղինակ Լ. Վ. Դալլաքյանը կկարողանար համակարգված ներկայացնել քաղաքական զարգացման և արդիականացման տեսությունների խաղային բնույթը՝ զուգամիտելով Ս. Հանթինգթոնի **«քաղաքակրթությունների բախում»**, Ժ. Նայի **«փափուկ ուժ»**, Շ. Այզենշտադի **«բազմաչափ արդիություն»** և Խ. Լինցի ու Ա. Ստեպանի **«բազմաչափ հասարակություն»** հայեցակարգերը:

2. Ընդունված կարգ է, որ ատենախոսության առաջին գլուխն իր ենթագլուխներով նվիրված է լինում ուսումնասիրվող թեմայի տեսական զարգացմանը և հեռանկարներին: Հաշվի առնելով ատենախոսության թեմայի բնույթը՝ նպատակահարմար կլիներ, եթե հեղինակը նոր աշխարհակարգի կայացման գործընթացում ծագած **էթնոքաղաքական հակամարտությունների** տեսամեթոդաբանական խնդիրները դիտարկեր կոնֆլիկտաբանական, աշխարհաքաղաքական, մարդաբանական, քաղաքակրթական դասական ու նորագույն տեսությունների համադրմամբ՝ բացահայտելով **«ով եք մենք»** հանթինգթոնյան հարցադրման ազդեցությունը **«քաղաքակրթական խզման գծերի»** հեղափոխականացնող և մարգինալացնող էության վրա: **Տեսական այս մոտեցումների բացակայության հետևանքով ատենախոսության առաջին գլուխը համակարգված և ավարտուն չէ:**

3. Աշխատանքը մի շարք հատվածներում, հատկապես առաջին գլխի երկրորդ ենթագլխում շատ է ծանրաբեռնված հանրածանոթ փաստերի շարադրմամբ: Աշխատանքը պատմական ժամանակագրությամբ ծանրաբեռնելը բացասական ազդեցություն է ունեցել առաջադրված խնդիրների տեսական վերլուծության և ակադեմիական առաջարկների, այդ թվում՝ աշխատանքի նորույթը ձևավորելու վրա: Մասնավորապես, ատենախոսության առաջին գլխում տեղ գտած թեմայի ուսումնասիրման տեսական ոչ համակարգված հիմնավորումը ազդեցությունն է ունեցել «Գիտական նորույթ» բաժնի հիմնադրույթների ձևակերպումների վրա, որոնց լեզվամտածողությունը լրագրողական է և հիմնականում չի համապատասխանում նմանօրինակ աշխատանքներին ներկայացված պահանջներին: Ուստի որպես գիտական նորույթ ներկայացված յոթ կետերն էլ իրենց ձևակերպումներով վիճարկելի են:

4. Աշխատանքն էականորեն կշահեր, եթե ունենար համագործակցության մշակույթին նվիրված ենթագլուխ: Դա հնարավորություն կտար իրավամբ նորույթ ապահովել՝ բացահայտելով «համագործակցության մշակույթ» հասկացության արժեքային բազմաչափությունը՝ հակամարտությունների կարգավորման բանակցային ձևաչափերի խաղային բնույթը բացահայտելու և նոր աշխարհակարգի կայացման անորոշությունները կարևորելու առումով:

5. Ատենախոսությունում առկա է այսպիսի ձևակերպում. «Ի դեպ, ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի մասին առաջին անգամ նշվել է ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հանրահայտ «14 կետերում», որոնք հրապարակվել են

առաջին աշխարհամարտից հետո» (էջ 18): Նախ՝ ձևակերպումը ակադեմիական իմաստով վիճարկելի է և գիտաչափ ոճին համապատասխան չէ ***(ի դեպ):*** Եվ հետո՝ «աշխարհ-համակարգ» տեսության հիմնադիրը ամերիկացի սոցիոլոգ, քաղաքագետ Ի. Վալլերշտայնն է (1930-2019), որը Վ. Վիլսոնի և Վ. Լենինի վարած ազգային քաղաքականությունը ներկայացնում է որպես գաղութային՝ փոխհամաձայնեցված քաղաքականություն: Ատենախոսությունն էապես կշահեր, եթե հեղինակը «աշխարհ-համակարգ» տեսության շրջանակում ներկայացներ **ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերը և հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների բնույթը:**

Բացի վերոնշյալից, ինքնորոշման իրավունքի կոնցեպտի առաջացման նախապատմությունը կարելի է դիտարկել Վեստֆալյան համակարգի ձևավորման համատեքստում՝ ազգ-պետության գործառման անհրաժեշտության հիմնավորմամբ: Նպատակահարմար կլիներ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից ինքորոշման իրավունքի շրջանառության մեջ դնելը բացատրել նաև հետպատերազմյան ժամանակահատվածում ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական հետաքրքրություններով և նոր աշխարհակարգի պայմաններում ամերիկյան ազդեցության մեծացման ծրագրերով:

6. 42-րդ էջում հեղինակը գրում է. «Վերոնշյալից ելնելով, մեր կարծիքով, արցախյան հիմնախնդրի լուծման հարցում հայկական կողմի դիրքորոշումը թերևս պետք է հիմնված լինի հետևյալ փաստարկների վրա», ապա շարադրում է 12 կետ, որոնցից 11-ը հանրածանոթ փաստեր են, իսկ վերջին՝ 12-րդ կետի հիմնավորումը և գործառնման հնարավորությունը պատշաճ ներկայացված չէ:

7. 43-րդ էջի 5-րդ կետում հեղինակն առաջարկում է ղարաբաղյան հիմնախնդրի մասով կիրառության մեջ դնել «անջատում՝ հանուն փրկության» սկզբունքը, այն դեպքում, երբ Արցախը երբեք անկախ Ադրբեջանի մաս չի կազմել: Ընդ որում, Լեռնային Ղարաբաղն անկախության հանրաքվեն անցկացրել է ավելի շուտ, քան Ադրբեջանը՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ին՝ համաձայն խորհրդային օրենսդրության, այդ թվում՝ 1990 թ. ապրիլի 3-ի ԽՍՀՄ միութենական հանրապետությունների դուրս գալու մասին օրենքի: «Անջատում հանուն փրկության» սկզբունքի կիրառելիությունը ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ տեսամեթոդաբանական հավելյալ ուսումնասիրությունների և հիմնավորումների կարիք ունի: Վերջին աշխարհաքաղաքական արմատական փոփոխություններով պայմանավորված հեղինակը նկատի պետք է ունենար, որ առանձին քննարկեր չճանաչված պետությունների **de facto** և **de jure** անկման, և նրա վերականգման բարդ և բազմաչափ խաղային բնույթը՝ կանխավ մշակված ուժային բևեռների ուղեղային կենտրոններով:

8. Ատենախոսության թեման խիստ դինամիկ է, ուստի ենթադրվում է նորագույն գրականության օգտագործում: Մինչդեռ օգտագործված գրականության ցանկում և հղումներում հիմնականում բացակայում են վերջին 4-5 տարիներին հրապարակված գիտական աշխատությունները: Այս հանգամանքն աշխատանքի գիտականությունը դարձրել է խնդրահարույց, քանի որ ակադեմիական

հետազոտության գիտաչափությունը հիմնականում ապահովվում է նորագույն գրականության վրա կատարված վերլուծության արդյունքներով: Աշխատանքի «Օգտագործված գրականության ցանկ» բաժնում ներառված 132 աղբյուրներից միայն 12-ն է հրապարակվել 2020 թվականից հետո, որոնցից 7-ը ակադեմիական չեն: Անհրաժեշտ ենք համարում փաստել նաև այն, որ «Օգտագործված գրականության ցանկ» բաժինը կազմելիս հեղինակը չի պահպանել ԲՈԿ-ի պահանջները՝ ցանկը անհրաժեշտ էր կազմել ոչ թե ըստ լեզուների, այլ ըստ օգտագործած աղբյուրների տեսակների՝ օրենքներ և օրենսդրական ակտեր, մենագրություններ, գիտական հոդվածներ, էլ. կայքեր և այլն:

9. Ատենախոսությունում առկա են գիտաչափությունը չպաշտպանած և հրապարակախոսական բնույթի ձևակերպումներ: Օրինակ. «Մինչ օրս գիտնականների միջև գոյություն ունի բանավեճ, թե ովքեր են ինքնորոշման իրավունքի սուբյեկտները» (էջ 31): Հարց՝ ովքե՞ր են այդ գիտնականները: Նույն էջում՝ «Իրավագետները միակարծիք են, որ գաղութացված ժողովուրդները լիովին օգտվում են ինքնորոշման իրավունքից»: Հարց՝ ովքե՞ր են այդ իրավագետները: Կամ՝ «Արցախյան երկրորդ պատերազմից առաջ Թուրքիան իր դաշնակից Ադրբեջանի հետ հասկացավ, որ Ռուսաստանը չի ընդդիմանա թուրք-ադրբեջանական տանդեմին և, ինչպես հարյուր տարի առաջ, կզոհաբերի հայկական տարածքները որպես մանրադրամ» (էջ 154): Աշխատանքը էականորեն կշահեր, եթե հեղինակը Արցախյան 44-օրյա պատերազմի ողբերգական հետևանքներն ուսումնասիրելիս օգտագործեր ֆրանսիացի Դոմինիկ Մոյզիի «Հույզերի աշխարհաքաղաքականություն» աշխատությունը, որտեղ վերլուծված են արդի միջազգային հարաբերությունները՝ իրենց բազմաչափ կերպարային ռիսկայնության մեջ (Dominique Moisi, The Geopolitics of Emotion: How Cultures of Fear, Humiliation, and Hope are Reshaping the World, Anchor Books, New York, 2010):

10. Ատենախոսությունն առավել համակարգված կլիներ, եթե հեղինակը տարբերակված դիտարկեր 20-րդ դարի 50-ական թվականներին գաղութային լծի փլուզումից հետո աֆրիկյան և լատինա-ամերիկյան երկրներում մետրոպոլիայի վարած նեոմալթուսականության և 20-րդ դարի 90-ական թվականներին հետխորհրդային նոր անկախացած երկրներում առկա նեոմալթուսականության տարբերությունները:

11. Ատենախոսությունը խմբագրման և մասնագիտական բառապաշարի հստակեցման կարիք ունի:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնը, որպես առաջատար կազմակերպություն, համարում է, որ Լիլիթ Վիկտորի Դալլաքյանը «Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում» թեմայով ատենախոսության հաջող պաշտպանության դեպքում արժանի է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Եզրակացությունը հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի 2024 թ. սեպտեմբերի 6-ի նիստում:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հոգեբանության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

_____ Լ. Պետրոսյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար,

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ _____ Ս. Պողոսյան

6. 09. 2024 թ.